

RA Ministry of Diaspora

From: "Տիգրանուհի Կարապետյան" <tigranoohi@yahoo.com>
To: <ministry@mindiaspora.am>
Sent: 10 мая 2010 г. 17:19
Subject: Տիգրանուհի Կարապետյան has sent you a link on www.gov.am

Տիգրանուհի Կարապետյանը Ձեզ է ուղարկել հետևյալ հղումը: Շնորհակալ ենք ընթերցելու համար:

URL: <http://www.gov.am/am/structure/126/>

Հարգելի Հրանուշ Հակոբյան Ձեզ դիմում է "Մեր տունը" սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ Տիգրանուհի Կարապետյանը: Ես հիացած եմ Ձեր նորաստեղծ նախարարության աշխատանքների հաջողություններով և Ձեր եռանդով: Ցանկանում եմ տեղյակ պահել սփյուռքահայ բարեգործ Ջուլի Աշեկյանի գործունեության մասին: 1988թ. երկրաշարժից հետո Ջուլի Աշեկյանը Հայաստանի երեխաներին օգնելու համար ստեղծեց CASP ծրագիրը, այսինքն՝ ըստ այդ ծրագրի Հայ Առաքելական Եկեղեցու Թեմերում ստեղծվեցին օգնության գրասենյակներ՝ Միսիանում, Գորիսում, Գյումրիում: Աշխատանքներ իրականացվեցին նաև Արարատյան Հայրապետա ?կան Թեմի բարեգործական գրասենյակում: Այդ դժվարին տարիներին վստահաբար կարելի է ասել, որ CASP-ը առաջինն էր օգնում հայաստանի 4 մանկատներին: Երբ վիճակը մի փոքր բարելավվեց որոշեցին օգնել միայն Գավառի մանկատանը, քանի որ այն հեռու էր Երևանից: CASP-ի նպատակն էր Գավառի մանկատան երեխաներին ապահովել հնարավորինս ամեն ինչով՝ սնունդով, հագուստով, հիգիենայի պարագաներով: CASP-ի միջոցներով մանկատան շենքը ապահովվեց մշտական ջրով, կաթսայատնով, վերանորոգվեց ԿՄ Խոհանոցը և սանհանգույցները: Պավառի մանկատան օգնությունները եղել են մշտական: Դուք տեսել եք դա Ձեր այցելությունների ընթացքում և բազմիցս մանկատան տնօրեն Նիկոլայ Նալբանդյանը Ձեզ տեղյակ է պահել այդ մասին: 22 տարի շարունակ տիկին Ջուլին անձնվեր աշխատանքներ է կատարել ԱՄՆ-ում կազմակերպելով դրամահավաքներ, գտնելով բարերարներ: Հայ ժողովրդի և Թայաստանի նկատմամբ նրա անսահման սիրո և նվիրվածության վկայությունը կարող է լինել այն, որ նա 44 անգամ այցելել է Հայաստան, ամեն անգամ բերելով իր մարդասիրական օգնությունը: 2005թ. Ջուլի Աշեկյանի ջանքերով ԱՄՆ-ում հիմնվեց "Մեր տուն" վարչությունը, որի նպատակն էր Հայաստանում հիմնել կազմակերպություն, որը հոգ կտաներ մանկատան շրջանավարտ աղջիկների կրթության և ապաստանի հասցի: 2006թ.-Շց "Մեր տուն" ՀԿ-ն գործում է Էջմիածնում: Այն կրթական ծրագիր է, ինչպես նաև թրաֆիֆինգի դեմ չ: 4 տարիների ընթացքում այդ ասպարեզում մենք ունեցել ենք բազմաթիվ հաջողություններ, ծրագրի ինամարկու 5 աղջիկներ ամուսնացել են, կազմել ամուր ընտանիքներ և մենք արդեն ունենք 5 թոռնիկներ և ևս մեկ աղջիկ պատրաստվում է ամուսնանալ հունիսին և Ձեզ սիրով կհրավիրեն! ք մասնակցելու: Ջուլի Աշեկյանը մեր տան աղջիկների համար թույլ տատիկ է, որովհետև նրանց ճանաչել և օգնել է դեռևս Գավառի մանկատանից: Հարգելի Հրանուշ Հակոբյան ուզում եմ Ձեզ տեղեկացնել, որ հիմա Ջուլի Աշեկյանը պայքարում է քաղցկեղի դեմ, բայց Կ³ մի րոպե չի դադարեցրել իր հայրենանվեր աշխատանքը և շարունակում է օգնել այս անօթևան աղջիկներին: Որպես

« ԿԱԶՄԻՆԻՍԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԸ »
 Մասնիկ 1279-10
 « 11 » 05 20 10 10.05.2010

ՀՀ քաղաքացի խնդրում եմ Ձեզ, որ Դուք որպես Սփյուռքի նախարար որևէ կերպ խրախուսեք մեծ բերար, հայրենասեր Ջուլի Աշեկյանին և գնահատանքի արժանացնեք նրա՝ երկարամյա հայանվեր աշխատանքը: ՀՀ պետության կողմից որևէ գնահատականը մեծ ուժ և ոգևորություն կտա տիկին Ջուլիին: Ավելացնեմ նաև, որ "Մեր տունը" հաճախ է հյուրընկալում սփյուռքահայ երիտասարդների, որոնք գալիս են ծանոթանալու մեր ծրագրին նաև որպես կամավորներ: Ուրախ կլինենք Ձեզ հյուրընկալել "Մեր տունը" և հուսով ենք չեք մերժի: Մեծագույն հարգանքներով Տիգրանուհի Կարապետյան